ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԳԱԼՍՏՅԱՆ Մ.Վ.

Արդի շրջանում Հայաստանի բնակչության արտաքին աշխատանքային միգրացիան իր ազդեցությունն է թողնում հանրապետության սոցիալ-տնտեսական գործընթացների վրա: Այսպես, 2015 թ. Հայաստանից աշխատանքային միգրանտների թիվը կազմել է 60-65 հազար մարդ[1], որը մի կողմից դարձել է այդ ընտանիքների եկամուտների ձևավորման կարևոր աղբյուր, մյուս կողմից դրա հետևանքով հանրապետությունում լայն տարածում է ստացել «երկատված» ընտանիքների մոդելը: Աշխատանքային միգրացիան Հայաստանի համար առաջացնում է սոցիալ-տնտեսական մի շարք լուրջ հիմնախնդիրներ, որոնց ուսումնասիրությունը դրա հետագա կարգավորման առումով ունի կարևոր գործնական նշանակություն: Մասնավորապես, անհրաժեշտ է պարզել, թե որոնք են աշխատանքային միգրացիայի մասնակցության պատճառները, սեռատարիքային և կրթական ինչ բնութագրեր ունեն միգրանտները, և ի՞նչ հետևանքներ է ունենում այն անհատի, ընտանիքի և հասարակության մակարդակով: Այդ խնդրի բացահայտման նպատակով որպես հետազոտության օբյեկտ ընտրվել են միգրանտ ունեցող ընտանիքները, որոնց շրջանում իրականացվել են էթնոսոցիոլոգիական հարցումներ[2]: Հետազոտության արդյունքների պարզա-

---

[1] Պետպատվերով գիտահետազոտական թեմայի գիտական հաշվետվություն, Թեմայի գիտական ղեկավար, տ.գ.թ. Ռ. Եգանյան, Ե., 2015, http://www.smsmta.am/upload/Hashvetvutyun-23.12.2015 (13.03.2018):

[2] Էթնոսոցիոլոգիական հարցումներն իրականացվել են 2016-2017 թթ. Երևանում և Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի, Արմավիրի, Արագածոտնի մարզերի վեց քաղաքային և քսան գյուղական բնակավայրերի 384 ընտանիքներում: Վերջին 5 տարվա կտրվածքով (2013-2017) 126 ընտանիք (32.8%) ուներ աշխատանքային միգրանտ: Այդ ընտանիքների 69,8%-ից արտագնա աշխատանքի էր մեկնել մեկ, 25.4%-ից՝ երկու, 4%-ից՝ երեք, իսկ 0.8%-ից՝ չորս միգրանտ: Նրանց 47,6%-ը պատկանում է միջին, 29,9%-ը՝

բանման համար մեթոդաբանական հիմք են ընդունվել միգրացիայի վերաբերյալ գոյություն ունեցող տնտեսական տեսությունները: Մասնավորապես նշենք Է. Ռավենշտայնի մոտեցումները, ձևակերպված միգրացիայի վերաբերյալ տասնմեկ օրենքներում, որտեղ նա հանգում է այն եզրակացության, որ միգրացիայի գլխավոր պատճառներն են տնտեսական գործոնը և բարձր վարձատրվող աշխատանքը[3]: Ըստ Էվերեթ Ս. Լիի՝ յուրաքանչյուր տարածքում գործում են միգրացիոն գործոնների տարբեր խմբեր՝ պահպանող, ձգող և վանող, որոնք որոշում են միգրանտների ժամանումը և մեկնումը: Միգրացիայի վանող երևույթների շարքին դասում են տնտեսական (գործազրկությունը, եկամուտների ցածր մակարդակը, բարձր հարկերը), սոցիալական և քաղաքական բնույթի գործոնները (աղքատությունը, խտրականությունը, խղճի և հավատի ազատության սահմանափակումը, պատերազմները), անբարենպաստ բնակլիմայական պայմանները և այլն: Միգրանտներին ձգող գործոններից են տնտեսական զարգացման և եկամուտների բարձր մակարդակը, անվտանգությունը, աշխատաշուկայում մուտք գործելու հնարավորությունը (այդ թվում՝ ոչ պաշտոնական հատվածում, որը կարևոր է ոչ լեգալ միգրանտների համար) և այլն[4]: Նոր դասական տեսության ներկայացուցիչները (Մ. Ֆրիդման, Պ. Սեմյուելսոն) աշխատանքային միգրացիայի դերը քննարկում են տնտեսական զարգացման գործընթացում և միգրացիան համարում են տարածքների միջև աշխարհագրական տարբերությունների, աշխատուժի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության արդյունք: Միգրացիայի ազդակ են համարվում ելքի և մուտքի տարածքների միջև եկամուտների տարբերությունները: Համաձայն այդ տեսության՝ միգրացիայի ուսումնասիրությունը նպատակ է հետապնդում լուծելու ռեսուրսների արդյունավետ բաշխման խնդիրը[5]:

Անդրադառնանք այն խնդրին, թե աշխատանքային միգրանտների վարքի ձևավորման և այդ գործընթացին մասնակցության վրա ինչ գոր-

---

ավագ, իսկ 22,6%-ը՝ երիտասարդ սերնդին: Ըստ սեռային բաշխվածության՝ 89,6%-ը տղամարդ է, իսկ 10,4%-ը՝ կին:

[3] **Ravenstein E.G.** The Laws of Migration (Journal of the Statistical Society of London, Vol. 48, No. 2 (June, 1885), pp. 167-235).

[4] **Everett S. Lee A**. Theory of Migration (Demography, Vol. 3, No. 1 (1966), pp. 47-57).

[5] Տե՛ս **Садовская Е.Ю**. Социология миграций и современные западные теории международной миграции (Социальная политика и социология, 2004, N 1, с. 83-88):

ծոններ են ազդում: Նշենք, որ անհատի միգրացիոն վարքի մեխանիզմների ձևավորման հարցում կարևորվում են նրա պահանջմունքները և շահերը՝ որպես նրա տնտեսական գործունեությունը խթանող կարևոր աղբյուր: Աշխատանքային միգրացիայի պատճառների վերաբերյալ առավել օբյեկտիվ պատկեր ստանալու նպատակով «Որո՞նք են արտագնա աշխատանքի մեկնելու հիմնական պատճառները» հարցին հնարավորություն էր տրված պատասխանելու միայն թիրախ խմբին, այն ընտանիքներին, որոնք ունեին աշխատանքային միգրանտներ: Հարցմանը մասնակցած տղամարդ և կին միգրանտ ունեցող ընտանիքների կեսից ավելին որպես միգրացիայի պատճառ նշել է Հայաստանում աշխատանքի (նաև մասնագիտական) բացակայությունը: Աշխատանքային միգրացիայի մեկնելու այդ պատճառը գերակշռում է նաև երիտասարդ, միջին և այնուհետ ավագ սերնդի միգրանտների շրջանում: Այդ պատասխանի համար իրական հիմքը, բնականաբար, Հայաստանում գոյություն ունեցող գործազրկության բարձր մակարդակն է, որը 2017 թ. դրությամբ կազմել է 220,2 հազ. մարդ (տղամարդիկ՝ 116.9 հազ., կանայք՝ 103.3 հազ)[6]: Թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց շրջանում մեկ քառորդը արտերկրում աշխատելու պատճառները պայմանավորող կարևոր գործոններից է համարել ընտանիքի առաջնային կարիքները բավարարելու համար անհրաժեշտ գումար վաստակելու հանգամանքը: Ընդհանուր առմամբ, ընտանիքի տնտեսական ապահովման գործառույթը կարևոր ազդեցություն է թողնում ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց միգրացիայի վարքագծի ձևավորման գործում: Տղամարդ միգրանտների 13.4%-ը և կին միգրանտների 12.2%-ը պլանավորել են դրսում գումար վաստակել տան կառուցման/ գնման, համապատասխանաբար 3.1% և 1.7%-ը՝ ամուսնության/ հարսանիքի և այլ արարողությունների, 5.1% և 4.2%-ը՝ երկարատև օգտագործման ապրանքներ (ավտոմեքենա, կահույք և այլն) ձեռք բերելու համար: Ինչպես տեսնում ենք, մեր օրերում փոխակերպման են ենթարկվում ընտանիքում կանանց կարգավիճակները և դերերը. միգրանտ կանայք իրենց վրա են վերցնում նաև ընտանիքի տնտեսական ապահովման գործառույթը, որը հայոց մեջ ավանդականորեն կատարել են տղամարդիկ: Դրա հետևան-

[6] Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2017, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (այսուհետև՝ ԱՎԾ), http://www.armstat.am/file/article/trud_2017_9.pdf (13.10.2016):

քով ընտանիքում նրանց դիրքն ավելի է մոտենում տղամարդկանց կարգավիճակին և, շնորհիվ ձեռքբերված նյութական միջոցների և ռեսուրսների, կարողանում են ազդել նաև ընտանիքում կարևոր որոշումների կայացման վրա: Հարցման մասնակիցների չնչին տոկոսն է, որ ցանկացել է աշխատանքային միգրացիայի միջոցով դրամ վաստակել և դրանով հայրենիքում ձեռք բերել արտադրության միջոցներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Աշխատանքային միգրացիայի մեկնելու պատճառները՝ ըստ սեռի և տարիքի

Պատճառները	Միգրանտների սեռ		Միգրանտների տարիք		
	Արական	Իգական	18-29	30-49	50 և բարձր
Աշխատանքի բացակայությունը	50,0	53,8	55,1	51,3	50,0
Մասնագիտությամբ աշխատանքի բացակայությունը	3,1	4,2	1,4	3,9	5,6
Ընտանիքի առաջնային կարիքները բավարարելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	25,5	21,8	18,8	27,6	23,6
Տան կառուցման (գնման), վերանորոգման համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	13,4	12,2	14,5	10,5	13,9
Ամուսնության, հարսանիքի, օժիտի և այլ անհրաժեշտ արարողությունների համար գումարի բացակայությունը	3,1	1,7	1,4	2,6	2,8
Ավտոմեքենա, կահույք, տեխնիկա ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	5,1	4,2	7,2	2,6	4,2
Արտադրության միջոցներ ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	1,0	0,8	1,4	1,3	0,0
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0

Ըստ հարցվածների կրթական մակարդակի՝ աշխատանքի բացակայությունը միգրացիայի պատճառ է համարել նաև բարձրագույն կրթություն ունեցողների 52.4%-ը: Այդ ցուցանիշը փաստում է այն մասին, որ միգրանտների կեսից ավելին Հայաստանում ստացել է բարձրագույն կրթություն, սակայն աշխատանքի բացակայության հետևանքով ստիպված է եղել մեկնել արտագնա աշխատանքի՝ դրսում կատարելու որակավորում չպահանջող ֆիզիկական աշխատանքներ (աղյուսակ 2):

Նախնական և միջին մասնագիտական կրթություն ունեցողները որպես աշխատանքային միգրացիայի պատճառ նշել են տեղում մասնագիտությամբ աշխատանքի բացակայությունը, և նրանց մի մասն էլ (14,3%), մեկնելով արտագնա աշխատանքի, ցանկանում է վաստակել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հայրենիքում արտադրության միջոցներ ձեռք բերելու և սեփական գործ հիմնելու համար: Ըստ նույն աղյուսակի տվյալնե-

րի՝ անկախ միգրանտների կրթական մակարդակից՝ ընտանիքի առաջնային կարիքների բավարարումը համարվում է նրանց միգրացիոն վարքի ձևավորման կարևոր գործոն:

Աղյուսակ 2

Աշխատանքային միգրացիայի մեկնելու պատճառները՝ ըստ հարցվողների կրթական մակարդակի, %

Արտագնացության մեկնելու պատճառները	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Նախնական մասնագիտական	Միջին մասնագիտական	Բարձրագույն
Աշխատանքի բացակայությունը	42,9	58,1	42,9	45,5	52,4
Մասնագիտությամբ աշխատանքի բացակայությունը	0,0	1,1	14,3	3,0	9,5
Ընտանիքի առաջնային կարիքները բավարարելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	28,6	21,5	14,3	24,2	26,2
Տան կառուցման (գնման), վերանորոգման համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	28,6	11,8	14,3	15,2	9,5
Ամուսնության, հարսանիքի, օժիտի և այլ անհրաժեշտ արարողությունների համար գումարի բացակայությունը	0,0	3,2	0,0	3,0	0,0
Ավտոմեքենա, կահույք, տեխնիկա ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	0,0	4,3	0,0	7,6	2,4
Արտադրության միջոցների ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	0,0	0,0	14,3	1,5	0,0
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0

Սոցիալ-տնտեսական առումով կարևոր է աշխատանքային միգրացիայի ունեցած ազդեցության բացահայտումը: Ըստ կարծիքների՝ աշխատանքային միգրացիան ընտանիքի վրա թողնում է երկակի՝ դրական և բացասական ազդեցություն: Աղյուսակ 3-ում ներկայացված է ընտանիքներում աշխատանքային միգրացիայի ունեցած դրական ազդեցությունը:

Ըստ այդ աղյուսակի՝ հարցվածների 86.2%-ի կարծիքով արտագնա աշխատանքի հետևանքով լուծվում են այդ ընտանիքների առաջնային կարիքները, քանի որ ձեռք բերված ֆինանսական միջոցներով հոգում են նրա անդամների սննդի, հագուստի, կացարանի և այլ կարևոր հարցեր: Այսինքն՝ Հայաստանի բնակչության աղքատության բարձր մակարդակի պայմաններում արտագնա աշխատանքը վերածվել է այդ ընտանիքների եկամուտների ձևավորման, նյութական վիճակի բարելավման և աղքատության հաղթահարման կարևոր միջոցի[7]: Բավական է նշել, որ, շնորհիվ աշխատանքային միգրացիայի, 2017 թ. դրսից ուղարկված ֆինանսական հոսքերը կազմել են 1.756.485 ԱՄՆ դոլար, որից 60.6%-ը՝ ՌԴ-ից[8]: Ֆինանսական այդ հոսքերը նպաստում են նաև Հայաստանում սոցիալ-տնտեսական լարվածության թուլացմանը: Հարցվածների 76.0%-ը համաձայն է այն կարծիքի հետ, որ արտագնա աշխատանքի միջոցով լուծվում է ընտանիքի աշխատունակ անդամների զբաղվածության հարցը և, շնորհիվ դրա, այլ երկրներում նրանք կարողանում են գտնել աշխատանք: Արտագնա աշխատանքի միջոցով վաստակած գումարներով նրանք լուծում են նաև ընտանիքի անդամների առջև ծառացած կրթական և առողջապահական խնդիրները, մասնավորապես հոգում են երեխաների դպրոցական և բուհական կրթության ծախսերը, օգտվում են վճարովի բժշկական ծառայություններից և այլն: Վերջին տեսակետի հետ համաձայն են հարցվածների համապատասխանաբար 79,2%-ը և 77.6%-ը: Ֆինանսական այդ միջոցներով լուծվում է նաև տուն կառուցելու/գնելու, վերանորոգելու (կարծիքի հետ համաձայն է հարցվածների 70.1%-ը) և ամուսնության, հարսանիքի, օժիտի, ինչպես նաև այլ անհրաժեշտ արարողությունների համար (կարծիքի հետ համաձայն է հարցվածների 71.6%-ը) ծախսերի հարցը: Այդ հանգամանքը միգրանտի ընտանիքի երեխաների համար ստեղծում է նաև որոշակի հնարավորություններ արտ-

[7] Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2017թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում աղքատության ցուցանիշը կազմել է 29.4%, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2017, http://www.armstat.am/am/?nid=82&id=1988 (07.03.17):

[8] ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց անունով կատարված դրամական փոխանցումների ներհոսքը 2017 թվականին, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիայի պետական ծառայություն, http://www.smsmta.am/?menu_id=52 (06.03.17).

երկրում ստանալու կրթություն կամ էլ ընտանիքով հաստատելու մշտական բնակություն: Այդ տեսակետներին համաձայնել են հարցվածների համապատասխանաբար 53.9%-ը և 58.8%-ը:

Աղյուսակ 3

Աշխատանքային միգրացիայի դրական ազդեցության վերաբերյալ դիրքորոշումները

Դրական ազդեցություն	Ընդհան-րապես համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն չեմ	Ավելի շուտ համա-ձայն եմ	Լիովին համա-ձայն եմ	Դժվա-րանում եմ պատա սխանել	Ընդամեն ը
Լուծվում են ընտանիքի առաջնային կարիքները (երեխաների սննդի, հագուստի և այլ հարցեր)	4,4	8,3	58,1	28,1	1,0	100,0
Լուծվում է ընտանիքի աշխատունակ անդամների զբաղվածության հարցը	6,3	16,9	53,9	22,1	0,8	100,0
Լուծվում է ընտանիքի անդամների ուսման համար պահանջվող ծախսերի հարցը	4,4	14,8	53,4	25,8	1,6	100,0
Լուծվում է ընտանիքի անդամների առողջության հետ կապված ծախսերի հարցը	7,3	13,5	51,3	26,3	1,6	100,0
Լուծվում է տուն կառուցելու /գնելու, վերանորոգելու հարցը	11,7	15,6	46,9	23,2	2,6	100,0
Լուծվում են ամուսնության, հարսանիքի, օժիտի և այլ անհրաժեշտ արարողությունների համար ծախսերի հարցը	9,9	16,1	50,8	20,8	2,3	100,0
Ստեղծվում է արտերկրում երեխաներին կրթություն ստանալու հնարավորություն	14,6	26,3	38,8	15,1	5,2	100,0
Ընտանիքն ստանում է արտերկիր տեղափոխվելու և այնտեղ ապրելու հնարավորություն	14,3	22,7	42,4	16,4	4,2	100,0

Անդրադառնանք այն հարցին, թե աշխատանքային միգրացիան ինչ խնդիրներ է առաջ բերում ընտանիքում և ներընտանեկան հարաբերություններում: Այդ հարցի պարզաբանման համար հարցվածներին նույնպես առաջարկվել էին դատողություններ, որոնց հետ համաձայն լինելու կամ չլինելու վերաբերյալ նրանք արտահայտել են իրենց դիրքորոշումները (աղյուսակ 4): Այդ դիրքորոշումների մեջ առանձնակի տեղ է

գրավում միգրանտի և նրա ընտանիքի վրա այդ երևույթի թողած բացասական ազդեցությունը: Ընտանիքից միգրանտի երկարատև բացակայության և տարիներ շարունակ այլ երկրներում արտագնա աշխատանքի մեկնելու պատճառով սահմանափակվում են ընտանիքի մյուս անդամների հետ նրա շփումները, որն էլ իր հերթին առաջացնում է հոգեբանական այնպիսի երևույթ, ինչպիսին կարոտն է: Այդ մտքի հետ համաձայն է եղել հարցման մասնակիցների 97.7%-ը: Աշխատանքային միգրացիան, հարցվածների 90.1%-ի կարծիքով, լուրջ բացասական ազդեցություն է թողնում առողջական վիճակի վրա: Օրական միջին հաշվով 10-12 ժամ, հաճախ առանց հանգստյան օրերի, ծանր ֆիզիկական աշխատանքը, անկանոն սնվելը և ոչ ճիշտ սանիտարահիգիենիկ պայմանները մի շարք հիվանդությունների առաջացմանն են խթանում: Մյուս կողմից՝ Հայաստանում տարեցտարի ավելանում է նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ սեռավարակակիրների թիվը, որը, մասնագետների վկայությամբ, հիմնականում պայմանավորված է Ռուսաստանի Դաշնություն արտագնա աշխատանքի մեկնող միգրանտների վարքով: Երիտասարդ և միջին տարիքի միգրանտներն այնտեղ ձեռք են բերում սեռավարակ հիվանդություն և վերադառնալուց հետո փոխանցում ընտանիքին[9]: Հարցվածների 89.4%-ը կողմնակից է այն կարծիքին, որ արտագնա աշխատանքի հետևանքով ընտանիքում լարվում են ամուսին – կին հարաբերությունները, 87.7%-ը՝ ավելանում է ամուսնալուծվողների թիվը, 87,2%-ը՝ տուժում է երեխաների դաստիարակության գործը: Աշխատանքային միգրացիայի պատճառով խաթարվում են ընտանիքի ձևավորման կարևոր կենսափուլերը. ամուսնանալուց անմիջապես հետո արտագնա աշխատանքի մեկնելը, առաջին կամ երկրորդ երեխայի ծննդյան ընթացքում արտագնա աշխատանքի վայրում գտնվելը, երբեմն նաև երեխաների նշանադրությանը և ամուսնությանը չմասնակցելը բացասական ազդեցություն են թողնում ընտանիքի ամրության վրա: Դրա հետևան-

[9] Նման մարդկանց թիվը ամենաբարձրն է Շիրակում և Գեղարքունիքում: Ըստ ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տվյալների՝ 1988-2015 թվականներին մեր հանրապետությունում գրանցվել է ՀՀ քաղաքացիների՝ ՄԻԱՎ վարակի 2214 դեպք (334-ը՝ միայն 2014 թ. ընթացքում. առավելագույնն է նախորդ տարիների համեմատ)[9]: Այդ դեպքերի 75%-ը տեղի է ունեցել միգրացիայի հետևանքով: Տե՛ս «Խոպան էր գնում, թմրամոլ էր, խաղամոլ... հետո պարզվեց, որ ՄԻԱՎ ունի ու ինձ էլ է փոխանցել». լռություն և զոհաբերություններ՝ հանուն հասարակական կարծիքի, http://medialab.am/news/id/6756 (03.03.2016):

քով համայնքներում ավելացել է ամուսնալուծված, լքված ընտանիքների թիվը[10]:

Աղյուսակ 4

Աշխատանքային միգրացիայի բացասական ազդեցության վերաբերյալ դիրքորոշումները

Բացասական ազդեցություն	Ընդհան-րապես համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն եմ	Լիովին համաձայն եմ	Դժվարա-նում եմ պատաս-խանել	Ընդամենը
Տուժում են ամուսին-կին փոխհարաբե-րությունները	2,3	7,6	33,1	56,3	0,8	100,0
Տուժում է երեխաների դաստիարա-կության գործը	1,3	10,9	28,9	58,3	0,5	100,0
Տուժում է ծերերին և հիվանդներին անհրաժեշտ խնամքով ապահովելու հարցը	6,5	20,6	27,9	44,0	1,0	100,0
Ավելանում է ամուսնալուծ-վողների թիվը	2,1	8,6	32,8	54,9	1,6	100,0
Ավելանում է չամուսնացած-ների թիվը	2,9	8,6	38,0	49,2	1,3	100,0
Տուժում են արտագնա աշխատանքի մեկնողի բարոյական նորմերը	6,5	17,4	30,2	42,2	3,6	100,0
Տուժում է արտագնա աշխատանքի մեկնողի առողջությունը	1,6	7,0	35,2	54,9	1,3	100,0
Օտար միջավայրում մեծանում է նրան սպառնացող վտանգը	1,8	7,0	34,4	55,2	1,6	100,0
Ընտանիքում ուժեղանում է միգրանտի նկատմամբ կարոտը	,5	1,0	25,0	72,7	0,8	100,0

[10] Ըստ ԱՎԾ 2018 թ. հունվարի 1-ի տվյալների՝ Հայաստանում ամուսնությունների թիվը կազմել է 16 924 մարդ, իսկ ամուսնալուծություններինը՝ 3648 մարդ (22.3%), ընդ որում՝ դրա մի մասը մասնագետները կապում են աշխատանքային միգրացիայի հետ: Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2017, http://www.armstat.am/am/?nid=82&id=1991:

Ըստ հարցվածների՝ այդ ընտանիքներում միգրանտներն ավելի քիչ դերակատարում են ունենում երեխաների սոցիալականացման գործընթացներում և դաստիարակության գործում: Միգրացիան իր ազդեցությունն է թողնում այդ ընտանիքների ժողովրդագրական վարքագծի վրա, որի հետևանքով ավելանում է չամուսնացած երիտասարդների թիվը: Աշխատանքային միգրացիան երիտասարդների համար դարձել է նաև հանրապետությունից արտագաղթի կարևոր միջոց, ըստ այդմ՝ Հայաստանում շատացել է «դատարկ բույնի» նմանվող տարեց ընտանիքների թիվը: Դրանից տուժում է նաև ընտանիքում ծերերին և հիվանդներին անհրաժեշտ խնամքով ապահովելու հարցը:

Այսպիսով, Հայաստանից այդ երևույթի հետագա մեղմացմանը կարող է նպաստել հանրապետությունում գոյություն ունեցող միգրացիայի վանող գործոնների կարգավորումը, այն է՝ աշխատունակ բնակչության շրջանում գործազրկության մակարդակի կրճատումը և նոր աշխատատեղերի ստեղծում, բնակչության կենսամակարդակի բարձրացում և աղքատության հաղթահարում: Դրանք կնպաստեն միգրանտների առաջնային կարիքների բավարարմանը, տեղում զբաղվածության բարձրացմանը և հանրապետությունից միգրացիոն հոսքերի կրճատմանը: Մյուս կողմից աշխատանքային միգրացիայի կարգավորումը հիմք կարող է դառնալ սոցիալական մի շարք խնդիրների լուծմանը, մասնավորապես ամուսնալուծված, կոնֆլիկտային և լքված ընտանիքների թվի կրճատմանը:

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ ТРУДОВОЙ МИГРАЦИИ В РА

ГАЛСТЯН М.В.

Резюме

Трудовая миграция создает для Армении ряд серьезных социально-экономических проблем, всестороннее изучение которых имеет важное практическое значение с точки зрения ее дальнейшего регулирования. Проведенные в РА этносоциологические исследования позволяют выявить причины трудовой миграции и ее социально-экономические послед-

ствия на уровне индивидуума, семьи и общества. Дальнейшее решение проблемы предполагает регулирование существующих в республике отталкивающих от миграции факторов, что может привести также к ослаблению негативных социальных явлений.

SOCIAL-ECONOMIC IMPACTS OF LABOUR MIGRATION IN THE REPUBLIC OF ARMENIA

M. GALSTYAN

Abstract

Labour migration creates many critical social-economic problems for Armenia. A comprehensive study is required that will have practical significance and contribute to effective regulation of these problems. Therefore, ethno-sociological research was conducted among the Armenian population to explore the reasons for labour migration and its social-economic impacts at the individual, family and society levels. The problem's further statement implies regulation of factors preventing migration existing in the republic which may also contribute to the decrease of its negative impacts.